Հավելված

ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 11-ի N 1491 -Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2008 թվականի
նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ ՈՒ Յ Յ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Պատասխանատու կատարողը (համակատարողները)	Կատարման ժամկետը	Աշխատանքի արդյունքը (ձևը և բովանդակությունը)
1.	*ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ*			
1.1.	Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման և անհատականացված հաշվետվություններ ներկայացնելու, այլ տեղեկատվական համակարգերի հետ տեղեկատվության փոխանակության բիզնես-գործընթացների մանրամասն նկարագրություն և համակարգի տեխնիկական հանձնարարականի կազմում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) դոնոր կազմակերպություններ	25.12.2008 թ.	Մանրամասն կնկարագրվեն տեղեկատվության և ֆինանսական միջոցների շարժը (ճանապարհը), համադրումներ կատարելու, ներկայացված տեղեկատվությունը ճշտելու ընթացակարգերը և այլն:
1.2.	Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի համակարգչային ծրագրի տեխնիկական մասնագրերի կազմում և հաստատում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) դոնոր կազմակերպություններ	01.04.2009 թ.	Անձնավորված հաշվառման համակարգի համակարգչային ծրագրի տեխնիկական մասնագրեր, որտեղ մանրամասն կնկարագրվեն՝ 1) անձնավորված հաշվառման և անհատականացված հաշվետվությունների համակարգի ներդրման և կիրարկման գործընթացը. 2) գործատուի կողմից վարձու աշխատողների մասին տվյալներ ներկայացնելու ընթացակարգերը (այդ թվում՝ հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու փուլերը). 3) ներկայացված տվյալների հավաստիությունը ճշտելու նպատակով այլ տեղեկատվական բազաներից ստացվող

				տեղեկատվությունը և ճշտումներ կատարելու ընթացակարգերը. 4) անհատական հաշվում ներառված տվյալների մասին վարձու աշխատողներին տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգերը. 5) ՍԱՊԾ-ի կողմից վարվող տեղեկատվական բազայի տվյալները նոր տեղեկատվական համակարգ ներմուծելու ընթացակարգերը. 6) կիրառվող (օգտագործվելիք) կապուղիները և տվյալների փոխանակության ընթացակարգերը։ Կգնահատվեն անձնավորված հաշվառման և անհատականացված հաշվետվությունների համակարգի ներդրման և բնականոն գործունեության շրջանակներում պետական մարմինների տեխնիկական կարիքները (համակարգչային տեխնիկա, կազմտեխնիկա և այլն)՝ հաշվի առնելով գործատուներին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու ծառայություններ մատուցելու հնարավորությունը։
1.3.	Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի տեխնիկական առաջադրանքի կազմում, մրցույթի անցկացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) դոնոր կազմակերպություններ	01.01.2011 թ.	1) եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի՝ կառավարման խորհրդի հավանությանն արժանացած տեխնիկական առաջադրանք. 2) համապատասխան կնքված պայմանագիր՝ Համաշխարհային բանկի ընթացակարգերին համապատասխան անցկացված մրցույթում հաղթող կազմակերպության հետ
	Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրման իրավական ապահովում			
1.4.	«Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասինե ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող այլ օրենքների նախագծերի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր	25.12.2008 թ. (փաթեթով)	Օրենքի նախագիծ, որը պետք է կարգավորի անձնավորված հաշվառման հետ կապված իրավահարաբերությունները, ինչպես նաև պետք է սահմանի՝ 1) «անձնավորված հաշվառման համակարգե հասկացությունը. 2) անձնավորված հաշվառման իրականացման սկզբունքները. 3) գործատուի կողմից վարձու աշխատողների մասին

		պետական եկամուտների կոմիտե դոնոր կազմակերպություններ		տվյալներ ներկայացնելու ընթացակարգերը (այդ թվում՝ հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու). 4) անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում ներառվող տեղեկատվությունը. 5) անհատական հաշվում ներառված տվյալների մասին վարձու աշխատողներին տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգերը. 6) ներկայացված տվյալների հավաստիությունը ճշտելու և տեղեկատվական բազա մուտքագրելու ընթացակարգերը. 7) անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում ներառված տվյալներն օգտագործելու կարգը. 8) գործընթացում ներգրավված պետական կառավարման մարմինների, կազմակերպությունների, գործատուների և վարձու աշխատողների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության շրջանակը:
1.5.	«Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե դոնոր կազմակերպություններ	ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N 541-Ն որոշմամբ սահմանված կարգով ընդունվելիք՝ ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ սահմանված ժամկետներում	օրենքով սահմանված կարգերի առկայություն
1.6.	Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրումն ապահովող գերատեսչական իրավական ակտերի նախագծերի մշակում և հաստատման ներկայացնելը	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N 541-Ն որոշմամբ սահմանված կարգով ընդունվելիք՝ ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ	Գերատեսչական իրավական ակտի նախագիծ, որը կսահմանի՝ 1) անհատական հաշիվ բացելու կարգը. 2) անձնավորված հաշվետվությունների ձևը և լրացման կարգը. 3) տվյալներ ներկայացնողին անճշտությունների մասին տեղեկացնելու կարգը:

			սահմանված ժամկետներում	
	Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրման տեխնիկական ապահովում			
1.7.	Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրումը և կիրարկումը, տեղեկատվական համակարգի գործունեությունն ապահովող ծրագրային փաթեթի մշակում, փորձարկում և ներդրում (այդ թվում՝ գործատուների կողմից անհատականացված հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող մոդուլի), անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն դոնոր կազմակերպություններ	01.07.2012 թ.	Համապատասխան ծրագրային փաթեթի ներդրում, որը հնարավորություն կտա՝ 1) ընդունելու և մշակելու ամսական պարբերականությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացվող անհատական հաշվետվությունները. 2) ապահովելու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի միջև տեղեկատվության փոխանակությունը. 3) ապահովելու տեղեկատվական համակարգում ներառված տեղեկատվության հասանելիությունն այլ մարմինների համար՝ իրենց իրավասությունների սահմաններում. 4) համադրումներ իրականացնելու այլ տեղեկատվական համակարգերի հետ:
1.8.	Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի վերաբերյալ մեթոդական, ուսուցողական նյութերի մշակում և տպագրություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դոնոր կազմակերպություններ	01.08.2012 թ.	Կմշակվեն և կտպագրվեն անձնավորված հաշվառման համակարգի վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվական գրքույկներ, համակարգչային ծրագրի ուսումնական ձեռնարկներ և այլն:

1.9.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության անձնակազմերի, գործատուների համար ուսուցողական սեմինարների անցկացում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն դոնոր կազմակերպություններ	01.11.2012 թ.	Սեմինարի ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության անձնակազմերին և գործատուներին կներկայացվի անձնավորված հաշվառման մասին ՀՀ օրենսդրությունը, ինչպես նաև նրանք ձեռք կբերեն համապատասխան համակարգչային ծրագրերով աշխատելու գործնական գիտելիքներ՝ տեղում իրականացված ուսուցման միջոցով:
1.10.	Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի բնականոն գործունեությունն ապահովող ենթակառուցվածքների ձևավորում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ էկոնոմիկայի նախարարություն դոնոր կազմակերպություններ	01.10.2012 թ.	1) հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու տեխնիկական հնարավորությունների ուսումնասիրություն, կարիքների գնահատում (այդ թվում՝ Ինտերնետի հասանելիությունը Հայաստանի Հանրապետության տարածքում, անհրաժեշտ սարքավորումների (տերմինալների) քանակները և տեղադրման վայրերը) և Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ ներկայացնելը. 2) հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ձևավորում, տեխնիկական ապահովում. 3) առկա կապուղիների արդիականացում, ըստ անհրաժեշտության՝ նոր կապուղիների ներդրում. 4) հարկ վճարողներին էլեկտրոնային ստորագրության տրամադրում և այլն
2.	***ՆՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՎ ԲՆԱԿԱՆՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ***			
	Նոր կենսաթոշակային համակարգի ներդրման և գործունեության իրավական ապահովում			
2.1.	«Կուտակային կենսաթոշակների մասինե ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող այլ օրենքների նախագծերի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե դոնոր կազմակերպություններ	25.12.2008 թ. (փաթեթով)	Օրենքի նախագիծ, որը պետք է կարգավորի կուտակային համակարգի ներդրման և գործունեության հետ կապված իրավահարաբերությունները, ինչպես նաև պետք է սահմանի՝ 1) համակարգի կառուցվածքը, սուբյեկտները. 2) համակարգի գործունեությունը կարգավորող և վերահսկող մարմինը, դրա լիազորությունները. 3) համակարգի նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու պայմաններն ու կարգը. 4) ակտիվների կառավարիչներին ներկայացվող պահանջները, լիցենզավորման կարգը.

				5) կենսաթոշակային ակտիվների ներդրումներին ներկայացվող պահանջները (սահմանափակումները). 6) ակտիվների կառավարիչների ընտրության ընթացակարգերը, փոխելու պայմաններն ու կարգը, կենսաթոշակային ֆոնդերի ընտրությունը, դրանց փոփոխումը. 7) ծառայությունների գնային կարգավորումը. 8) կենսաթոշակային հիմնադրամներին (կամավոր) ներկայացվող պահանջները (սահմանափակումները). 9) կենսաթոշակային հաշիվների վարման և ակտիվների պահառության կարգը. 10) կուտակային միջոցները տնօրինելու պայմանները. կարգը, տարբերակներն ու ձևերը (իրավունք տվող տարիք, անուիտետ և ծրագրավորված վճարում, կուտակային միջոցների ժառանգում, ժամկետից շուտ ստացում և այլ). 11) կենսաթոշակների նշանակման և վճարման պայմաններ, ընթացակարգերը. 12) համակարգի սուբյեկտների (ակտիվների կառավարիչներ, կենսաթոշակային հիմնադրամներ, դեպոզիտարիա) իրավունքները, պարտականությունները, պատասխանատվության շրջանակը, կիրառվող սանկցիաները և այլն:
2.2.	«Պետական կենսաթոշակների մասինե ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող այլ օրենքների նախագծերի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե դոնոր կազմակերպություններ	25.12.2008 թ. (փաթեթով)	Օրենքի նախագիծ, որը պետք է կարգավորի կենսաթոշակների նշանակման և վճարման հետ կապված իրավահարաբերությունները, ինչպես նաև պետք է սահմանի՝ 1) «բաշխողական համակարգի կենսաթոշակներ (սոցիալական և աշխատանքային)ե հասկացությունը, այդ թվում՝ կուտակային բաղադրիչի շահառուներին վճարվող. 2) կենսաթոշակների տեսակները. 3) կենսաթոշակի հաշվարկման կարգը (չափը). 4) կենսաթոշակի իրավունք տվող պայմանները (տարիք, աշխատանքային ստաժ և այլն). 5) աշխատանքային ստաժը հաշվարկելու կարգը. 6) կենսաթոշակ նշանակելու, վերահաշվարկելու և վճարելու ընթացակարգերը. 7) կենսաթոշակի ֆինանսավորման աղբյուրները. 8) կենսաթոշակ նշանակող մարմինը. 9) կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ

				փաստաթղթերը. 10) կողմերի իրավունքները, պարտականությունները և այլն:
2.3.	«Կուտակային կենսաթոշակների մասինե ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե դոնոր կազմակերպություններ	ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N 541-Ն որոշմամբ սահմանված կարգով ընդունվելիք՝ ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ սահմանված ժամկետներում	օրենքով սահմանված կարգերի առկայություն
2.4.	«Պետական կենսաթոշակների մասինե ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե դոնոր կազմակերպություններ	ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N 541-Ն որոշմամբ սահմանված կարգով ընդունվելիք՝ ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ սահմանված ժամկետներում	օրենքով սահմանված կարգերի առկայություն
2.5.	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի և ՀՀ կառավարության միջև անհատական կենսաթոշակային հաշիվների վարման մասին պայմանագրի նախագծի մշակում և կնքում	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	01.07.2013 թ.	ՀՀ կառավարության և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված համապատասխան պայմանագիր, որը կսահմանի կենսաթոշակային հաշիվների բացումը և վարումը, մասնակիցների ռեեստր վարողի մյուս գործառույթները Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելը, այդ թվում՝ 1) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների վարձավճարների չափը. 2) մասնակիցներին տեղեկատվություն տրամադրելու պայմաններն ու կարգը.

				3) մասնակցի անձնական տվյալներում փոփոխություն կատարելու պայմաններն ու կարգը. 4) կենսաթոշակային ֆոնդի կառավարչին ընտրելու, կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կամ կենսաթոշակային ֆոնդը փոխելու համար դիմելու դեպքում մասնակցից վճարներ գանձելու պայմաններն ու կարգը (գումարի չափը). 5) կողմերի իրավունքներն ու պարտականությունները, համապատասխան տույժերն ու տուգանքները հաշվարկելու կարգը և այլն:
2.6.	«Կուտակային կենսաթոշակների մասինե ՀՀ օրենքի և այլ օրենքների կիրարկումն ապահովող՝ ՀՀ կենտրոնական բանկի իրավասություններից բխող գերատեսչական իրավական ակտերի մշակում	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	ՀՀ կենտրոնական բանկի աշխատանքային ծրագրով սահմանված ժամկետներում	կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարման գործընթացի, կենսաթոշակային ակտիվների պահառության, մասնակիցների ռեեստրի վարման, հաշվի օպերատորների գործունեության կանոնակարգման և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ կարգերի առկայություն
	Նոր կենսաթոշակային համակարգի ներդրման և գործունեության տեխնիկական ապահովում			
2.7.	Կենսաթոշակային հաշիվների վարումն ապահովող տեղեկատվական համակարգի ներդրման մասին պայմանագրի կնքում, համակարգի հիմնական բաղադրիչների ներդրում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն և ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (համաձայնությամբ)	տեղեկատվական համակարգի ներդրման մասին պայմանագրով սահմանված ժամկետներում	կենսաթոշակային հաշիվների վարում, կենսաթոշակային ֆոնդի ակտիվների պահառություն, ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկ, ծրագրային վճարների կատարում և այլն ապահովող համակարգչային ծրագրի առկայություն

2.8.	Միջազգային համբավ ունեցող ներդրումային ֆոնդի կառավարիչների հետ աշխատանքների իրականացում՝ հայաստանյան շուկայում նրանց ներգրավելու նպատակով	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	01.07.2013 թ.	միջազգային համբավ ունեցող՝ լիցենզավորված ակտիվների կառավարիչների առկայություն
2.9.	Մասնակիցների կողմից կատարված պարտադիր կուտակային վճարների երաշխավորման ֆոնդի ստեղծում և դրա գործունեության կանոնակարգում՝ ներառյալ կառավարման կարգն ու պայմանները	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	01.07.2013 թ.	մասնակիցների կողմից կատարված պարտադիր կուտակային վճարների երաշխավորումն ապահովող հիմնադրամի ստեղծում և դրա գործունեությունը կանոնակարգող ենթաօրենսդրական ակտերի առկայություն
3.	***ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ***			
3.1.	«Եկամտային հարկի մասինե ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող այլ օրենքների նախագծերի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե դոնոր կազմակերպություններ	25. 12.2008 թ. (փաթեթով)	Օրենքի նախագիծ, որը պետք է կարգավորի միասնական հարկը (այսուհետ՝ հարկ) հաշվարկելու, վճարելու, փոխանցելու հետ կապված իրավահարաբերությունները, ինչպես նաև պետք է սահմանի՝ 1) «միասնական հարկե (այսուհետ՝ հարկ) հասկացությունը. 2) հարկ վճարողներին. 3) հարկի հաշվարկման օբյեկտը և դրույքաչափը. 4) հարկը հաշվարկելու և վճարելու ժամկետները, ընթացակարգերը. 5) գործատուի, վարձու աշխատողի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավունքները և պարտականությունները
3.2.	«Եկամտային հարկի մասինե ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության որոշումների նախագծերի մշակում և ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դոնոր կազմակերպություններ	ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N 541-Ն որոշմամբ սահմանված կարգով ընդունվելիք՝ ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ սահմանված ժամկետներում	օրենքով սահմանված կարգերի առկայություն
3.3.	«Եկամտային հարկի մասինե ՀՀ	ՀՀ կառավարությանն առընթեր	ՀՀ կառավարու-	օրենքի կիրարկումն ապահովող հրահանգներ, հաշվե-

	օրենքի կիրարկումն ապահովող գերատեսչական իրավական ակտերի նախագծերի մշակում և հաստատման ներկայացնելը	պետական եկամուտների կոմիտե ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	թյան 2004 թվականի ապրիլի 8-ի N 541-Ն որոշմամբ սահմանված կարգով ընդունվելիք՝ ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ սահմանված ժամկետներում	տվական ձևեր, հարկ վճարողների անձնական հաշվի քարտերի ձևեր ու լրացման կարգ և այլն
3.4.	Հարկային մուտքերի հնարավոր նվազեցման ռիսկերը կառավարելու ծրագրի մշակում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	01.07.2012 թ.	Համապատասխան ծրագիր, որը կսահմանի հարկային մուտքերի հնարավոր նվազեցման ռիսկերը, դրանք չեզոքացնելու կառուցակարգերը:
3.5.	Հարկային մուտքերի հնարավոր նվազեցման ռիսկերը կառավարելու ծրագրի իրականացում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ըստ ծրագրի	ՀՀ պետական բյուջեի հարկային մուտքերի ապահովում, վարձու աշխատողների՝ տնօրինվող եկամտի նվազեցման բացառում
3.6.	Եկամտային հարկի վերաբերյալ մեթոդական, ուսուցողական նյութերի մշակում և հրատարակում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	01.08.2012 թ.	եկամտային հարկի վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվական գրքույկներ, ուսումնական ձեռնարկներ և այլն
3.7.	Գործատուների և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատողների համար եկամտային հարկի վերաբերյալ ուսուցողական սեմինարների անցկացում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	01.11.2012 թ.	Սեմինարի ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի անձնակազմին և գործատուներին կտրամադրվեն միասնական հարկի, կուտակային վճարումների հաշվարկման և վճարման կարգի կիրառման, հաշվետվական ձևերի և անձնական հաշվի քարտերի լրացման, համակարգչային ծրագրերի շահագործման պրակտիկ հմտություններ:
4.	***ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ***			

4.1.	Կենսաթոշակային բարեփոխումներին աջակցության ծրագրի մշակում և իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե դոնոր կազմակերպություններ	յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում և ըստ անհրաժեշտության	կենսաթոշակային բարեփոխումների միջոցառումների, այդ թվում՝ հանրային իրազեկման և հանրային կրթության իրականացման արդյունավետության բարձրացում, նոր կենսաթոշակային համակարգի ենթակառուցվածքների բնականոն գործունեության ապահովում
4.2.	Բարեփոխումների գործընթացում ներգրավված պետական կառավարման մարմինների նյութատեխնիկական կարիքների գնահատում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե դոնոր կազմակերպություններ	30.11.2009 թ.	Յուրաքանչյուր գերատեսչություն առանձին պետք է ներկայացնի նյութատեխնիկական միջոցների նկատմամբ իր պահանջարկը՝ մանրամասն նշելով, թե կոնկրետ ինչի համար է այն անհրաժեշտ, ներառելով նաև որակական և քանակական հիմնավորումները։ Ներկայացված տեղեկատվության և միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա կկազմվի ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացման վերաբերյալ առաջարկությունների փաթեթ։
4.3.	Պետական կառավարման մարմիններում անհրաժեշտ կառուցվածքային փոփոխությունների իրականացում	համապատասխան մարմիններ	01.07.2013 թ.	բազմաստիճան կենսաթոշակային համակարգի բնականոն գործունեության ապահովում
5.	***ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ***			
5.1.	Հանրային իրազեկման, հանրային կրթության, կենսաթոշակային համակարգի վերաբերյալ ընդհանուր և մասնագիտական գիտելիքների շարունակական մատուցման աշխատանքային ծրագրի հաստատում և իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) դոնոր կազմակերպություններ	շարունակական	1) կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հանրության, այդ թվում՝ պետական ծառայողների, տեղեկացվածության մակարդակի բարձրացում. 2) նոր կենսաթոշակային համակարգի շրջանակներում կուտակային բաղադրիչի մասնակիցներին կիրառական գիտելիքների տրամադրում (կենսաթոշային ֆոնդի կառավարչի ու համապատասխան ֆոնդի ընտրություն և այլն). 3) հանրության շրջանում ֆինանսական բազային և կիրառական գիտելիքների տարածում. 4) ֆինանսական շուկայի մասին անաչառ տեղեկատվության տրամադրում հանրությանը.

				5) կենսաթոշակային համակարգի վերաբերյալ ընդհանուր և մասնագիտական գիտելիքների մատուցում

է։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ